

Միայն աղբիւրներուն հետ չէ որ այսպէս կը վարուի. իւր վարժարանին եւ եկեղեցւոյն հետ ալ նոյն ընթացքն ունի:

Այս գիւղին ազգայիններն այնքան կաշխատին եկեղեցւոյն պայծառութեանը, որ անցեալները եկեղեցւոյն մէջ շաբաթ մը կաթիլ մը եղ չկար: Երբ քահանան իմացուց իրենց, թէ եղը հատեր է՝ ասոնք շրճարանի մը մէջ հաւաքուեցան՝ խորհրդակցելու համար:

–Ի՞նչ կ'ըսէք, եղբայրներ, եկեղեցւոյ եղը հատեր է:

–Ի՞նչ կ'ըլլայ եղեր, թող առանց եղի կատարուին արարողութիւնները:

–Ես ալ համակարծիք եմ. արարողութիւնն առանց եղի ալ կ'ըլլայ:

–Ցերեկ ատեն կանթեղ վառելն ի՞նչ նշանակութիւն ունի:

–Շոայլութի՛ւն է, շոայլութի՛ւն:

–Մեր քահանան ալ այլանդակ մարդ մ'է, Դիոգինէսի պէս ցերեկ ատեն կանթեղ կը վառէ:

–Առաւօտները մութուն կսկսի եկեղեցին, եւ անպատճառ լոյս պէտք է:

–Լուսնի լուսովը թող կարդայ:

Եւ վերջապէս որոշում կտրուի, որ քահանան քիչ մը տնտեսագիտական օրէնքներով վարուի:

Վարժարանին գալով՝ Գուրուչէշմէցին դասատու կբերէ, բայց ամսական չտար: Շատ դասատուներ մինչեւ այսօր թաղական խորհրդարանը կ'երթան իրենց մնացած ամսականներն ուզելու համար եւ չառնելու համար:

Կիրքն այս գեղացիներուն մէջ չափազանց ըլլալու է, որ իրենց մէջ համաձայնութիւն գոյացնելն միշտ անկարելի եղած է:

Հոս երեսուն - քառասուն տուն կայ Հայու. եթէ ութսուն տուն ըլլար՝ ամեն օր նոր կռիւներ պիտի ծագէին:

Կիներն այրերէն աւելի դպրոցասէր եւ եկեղեցասէր են. բայց իրենք իշխանութիւն չունենալով՝ լռութիւն պահելու ստիպուած են:

Կիներն շատ չեն սիրեր պտոյտն այն պատճառաւ, որ պտըտելու տեղ չկայ:

Օդը շատ աղէկ է գեղին բարձունքին վրայ, իսկ ծովեզերքի օդն աղէկ չէ: Օդին ազդեցութեան շնորհիւն է, որ վերի կողմին ազգայիններն աւելի